<u>Հայտարարություն</u>

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

**1. Իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորաման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 89-3.2-42)**

Ընդունում է լիցենզավորման, թույլտվություններ ստանալու հայտերը, ամփոփում դրանց վերաբերյալ հանձնաժողովի այլ ստորաբաժանումների կողմից ներկայացված կարծիքները, մշակում լիցենզիաների, թույլտվությունների պայմանները և այդ գործընթացը կանոնակարգող իրավական ակտերը, իրականացնում է կարգավորվող անձանց գործերի վարումը, ներկայացնում է լիցենզիաներում, թույլտվություններում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, մասնակցում է լիցենզիաների, թույլտվությունների պայմանների և այդ գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի մշակման և դրանց պարբերաբար կատարելագործման աշխատանքներին, ներկայացնում համապատասխան առաջարկություններ, մասնակցում է Հանձնաժողովի ներքին կանոնակարգային փաստաթղթերի մշակմանը լիցենզավորման մասով, նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր, մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

**2.Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝**

Իրավագիտություն մասնագիտությամբ կամ էներգետիկա և էներգամեքենաշինություն կամ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Զրային օրենսգրքի, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>>, <<Էներգետիկայի մասին>>, <<Լիցենզավորման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>>, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

**3.Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝**
Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

**4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝**
«27» «փետրվարի» 2019թ

**5.Աշխատավարձի չափը՝**
Մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը (150 799 ) դրամի չափով.

**6.Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝**
ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

**7.Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝** դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը

հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,
մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը $10^{00}$-ից մինչև $12^{30}$-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝
(Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118):